

**ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի իրավասությունները հեռուստատեսության և ռադիոյի
բնագավառում**

Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում Հանձնաժողովն իրականացնում է.

- **Լիցենզավորման մրցույթների անցկացում:** Հանձնաժողովը սահմանում է հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և պայմանները, իրականացնում է էթերային հաճախությունների հրապարակային և մրցութային հատկացումը ու ապահովում է մրցույթների արդյունքների մասին ամբողջական տեղեկատվության հրապարակումը:

- **Ազատ հաճախությունների մրցույթ:** Հանձնաժողովը ըստ անհրաժեշտության, բայց տարին առնվազն մեկ անգամ, հրապարակում է հաճախությունների ամբողջական ցանկը և հայտարարում ազատ (չգրադեցված) հաճախությունների մրցույթ: Բոլոր ազատ հաճախությունների միաժամանակյա մրցույթը պարտադիր չէ:

- **Առանց մրցույթի հաճախության հատկացում:** Հանձնաժողովը առանց մրցույթի հատկացնում է հաճախություններ Հանրային հեռուստատեսության, Հանրային ռադիոյի և միջպետական պայմանագրերով հեռուստառադիոհաղորդների հեռարձակման համար՝ նախապես համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հետ:

- **Հսկողության իրականացում:** Հանձնաժողովը հսկում է օրենսդրության պահանջների և արտոնագրում նշված պայմանների կատարումը: Նշվածի համար Հանձնաժողովը սահմանում է հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի վարման կարգը, ընտրանքային սկզբունքով իրականացնում է հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակվող ծրագրերի ուղղակի դիտարկումներ յուրաքանչյուր հեռուստառադիոընկերության համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Դիտարկման արդյունքները համադրվում են հեռուստառադիոընկերությունների կողմից ներկայացվող հաշվառման մատյանների տվյալների հետ: Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման տվյալների հիման վրա Հանձնաժողովը վերահսկում է հեռուստառադիոընկերությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պայմաններին:

- **Կողավորված հաղորդումների հեռարձակում:** Համապատասխան դիմումի հիման վրա Հանձնաժողովը թույլատրում է հեռուստառադիոընկերությունների կողմից կողավորված հաղորդումների հեռարձակումը:

- **Տեղեկատվության ձեռքբերում:** Անհրաժեշտության դեպքում պահանջում և ստանում է հեռուստառադիոհաղորդումների տեսագրություններ և ձայնագրություններ, որոնց օգտագործման միջոցով պարզում է դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

- **Լիցենզիայի գործողության կասեցումը կամ դադարեցում:** Հանձնաժողովը օրենսդրության խախտման դեպքերում իր որոշմամբ կասեցնում է հեռուստառադիոընկերության տվյալ հաղորդաչարի գործունեությունը՝ մինչև նշված խախտումների վերացումը կամ դատարանի համապատասխան որոշում կայացնելը:

- **Օրենսդրական նախագծերի մշակում:** Հանձնաժողովը կարող է ներգրավվել հեռուստատեսության և ռադիոյի բնագավառին առնչվող օրենսդրական նախագծերի և հեռուստառադիոհաղորդումների պատրաստման տեխնիկական չափանիշների, տեխնիկական միջոցների ստանդարտների մշակմանը:

- **Առանց արտոնագրման հեռուստառադիոհաղորդումների իրականացում:** Օրենսդրությամբ սահմանված դեպքերում Հանձնաժողովը տալիս է գրավոր թույլտվություն՝ առանց արտոնագրման (լիցենզավորման) հեռուստառադիոհաղորդումներ իրականացնելու համար:

- **Պատասխանատվության ենթարկում:** Օրենքի դրույթների, Հանձնաժողովի որոշումների և բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերի, ինչպես նաև արտոնագրի (լիցենզիայի) պայմանները չկատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովն այդ մասին գրավոր նախազգուշացնում է տվյալ հեռուստառադիոընկերությանը (հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը), որը պարտավոր է ողջամիտ ժամկետում կատարել ներկայացվող պահանջները: Գրավոր նախազգուշացումում ներկայացվող պահանջները չկատարելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է՝ տվյալ հեռուստառադիոընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով կամ իր որոշմամբ կասեցնել տվյալ հեռուստառադիոընկերության կամ նրա հաղորդաշարի գործունեությունը՝ մինչև նշված խախտումների վերացումը կամ դատարանի կողմից համապատասխան որոշման կամ վճռի օրինական ուժի մեջ մտնելը: